



4435

ՆՈՒԷՐ

Կ Ա Ղ Ա Ն Դ Ի

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ․ ԱՆԱՆԵԱՆԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1883

ՆՈՒԷՐ
Կ Ա Ղ Ա Ն Դ Ի

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ԱՆԱՆԵԱՆԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1884

4432



Ներկայ գրքոյկա որ ընտիր իմաստուններու եւ ընտիր պատմաբաններու հեղինակութիւններէն հաւաքածոյ մ'է, յատկապէս պատրաստուած է Նոր տարւոյ առթիւ Ազգային մանկտւոյն համար: Ուստի՝ վստահ եմք որ սոյն հրատարակութիւնն օգտակար պիտի ըլլայ, քանզի իւրաքանչիւր տողը կուտայ այն կրթութիւնը եւ այն բարի վարմունքը, զորս միշտ կարօտ են ուսանելու մարդիկ: Յաւ է ըսել, որ այն առաջին պէտքն դժբախտաբար նուազ կը տեսնուի մեր եղբարց ու զաւակաց վրայ, որոց ծառայութիւն մի ըստ կարի ընելու գովելի դիտաւորութեամբ գրքիս մէջ գլխաւորապէս այն ընտիր առածները, հանճարեղ խօսքերը, պատմութիւններն ու բարոյական խրատները ամփոփեցինք, որոնք ուղղակի վերաբերութիւն ունին կրթութեան ու բարոյականութեան: Եթէ տղայք ասոր մէջ եղածները ընդունին, կրնան մնացեալ պէտքերը աստիճանաբար ուսանիլ վարժարաններու մէջ, վերջապէս՝ մեք աւելի մտադրութիւն ըրինք քաղաքավարութեան ու բարոյականութեան հաւաքածոյ մը ընծայել սիրելի Ազգիս, որ անշուշտ պիտի փութայ քաջալերել զմեզ:





ԱՌՈՂՋԱԿԱՆ

Ձմրան և գարնան եղանակին մարդս աւելի
աննդեան և քնոյ կարօտ է քան թէ տարւոյ այլ
եղանակաց մէջ:

Ծերերն աննդեան կարօտութեան աւելի կը
հանդուրժեն, քան թէ երիտասարդք. իսկ ման-
կունք բնաւ:

Չափազանց քուն և արթնութիւն, երկուքն
ալ գէշ նշաններ են:

Անոնք որ երկարատեւ հիւանդութենէ մը
անցնելով նիհարացած են, պարտին զգուշու-
թեամբ և նուազ սնանիլ:

Առողջ մարդ մը որ լաւ փսրժակ ունի և

անդոր է, գիտնալու է որ չափէն աւելի կերակուրով ստամոքսը խանգարած է:

Անօթի փորանց աշխատելու չէ:

Հիւանդութեան մէջ լաւ է լոյծ, և ոչ կարծր կերակուրներով սնանիլ:

Նա որ մարմնոյ տարածէն աւելի կերակուր կուտէ՝ պիտի հիւանդանայ:

Այն կերակուրը որ հիւանդը ակտորժանօք կուտէ՝ փնաս չի տար:

Գեր մարդիկ աւելի յանկարծամահ կը լինին քան նիհարք:

Շարժամբ պատահած հիւանդութիւնք հանգըստեամբ կը բուժին:

Սառա կոչուած հիւանդութիւնք երբեմն տարիքն առնլով, կամ կլիմայի փոփոխութեամբ կը բուժի:

Եթէ կեանքդ չես ուզեր՝ դառնացնել հոգ և բարկութիւն մտքէդ արտաքսէ:

Չափաւոր լեր խմելիքներուդ մէջ և ընթրիքդ աւելատ չլլայ:

Կերակուրէն ետեւ շարժումը, և ցերեկուան պահուն բնաւ մի քնանար:

Կերակրոյ ատեն եթէ ջուր խմուի, նախ ըստամոքսն և ապա կերակուրը կը պաղի և մարմինն ալ կը փնասուի:

Աչաց կը փնասեն արեգական ճառագայթք կրակ, փաշի, հով, ոգելից ըմպելիք, մուխ, լալ կծու կերակուրք և դիշերներն անքուն անցնեն:

Ծննդեանց մեծագոյն մասը արական սեռին կը վերաբերի. սակայն աւելի շատ են մեռնող արք քան կանայք. այո՛, ասի արդանդէն կըսկըսի. զի աւելի յաճախ մեռեալ մանչ կը ծնի քան աղջիկ:

Պատերազմներէ և համաճարակ ակտերու բրած կոտորածներէ ետեւ աւելի շատ մարդիկ կը ծնին:

Ժողովրդեան մը բազմանալուն պատճառներն են. բարեկարգ կառավարութիւնք, ծաւալում վաճառականութեան և արուեստից, բարեչէն բնակարանք և քաղաք, մարքութիւն, սննդեան ընտրութիւն, ֆիզիքական և բարոյական ազնիւ դաստիարակութիւն և ամուսնութիւն, չափաւորութիւն, պատուաստ, բարեկարգ հիւանդանոցք, որբանոցք, բանտք. բժիշկներու, ման-

կաբարձից և դեղավաճառաց վրայ հսկողութիւն և համաճարակ ակտերու դէմ միջոցներ:

Այն ֆլասները որ զեղխութենէ յառաջ են եկած միայն ժուժկալութեամբ կը բուժին:

Մարդս օրը երեք անգամէն աւելի ուտելու չէ. այս կանոնը բացառութեան տակ կը դնեն տարիք, կլիմայ և պատահմունք:

Աղտեղութիւնը և անմաքրութիւնը բնաւ չկրնար արդարանալ զի ուր որ ջուր կայ հոն ամեն մէկը կրնայ մաքուր ըլլալ:

Հիւանդութեանց մեծագոյն մասը անմաքրութենէ կը ծագի:

Մարմնոյ և տան մէջ բնակող զանազան միջատներն մաքրութեամբ կարտաքսուին. բնութեան նպատակն է զմեզ անոնցմէ կրած նեղութեանց միջոցաւ մաքրասիրութեան մղել:

Փտացուցիչ և սաստիկ ջերմերուն պատճառներէն մին անմաքրութիւնն է. զի սովորաբար այն մարդկանց մէջ կ'սկսի որք աղտեղի բնակարանաց մէջ բնակին. անմաքուր օդ չնչն. ապառօղջ կերակուր ուտեն և պիղծ հանդերձներ հագնին:

Անմաքուր մարդիկ աղբի նման չենք կրնար մեր շրջանէն հեռացնել. ուստի անոնք որ իրենց առողջութեան նախանձախնդիր են, պէտք է աղտեղի անձանց և նոցա բնակարանաց շրջանէն հեռանան,

ԳԱՆԵԼԻՔ ԲԵՐՈՂ ԲԱՆԵՐԸ ՈՐՈՆՔ ԵՆ

Մարդու առջեւ մի քերուրտիր. գլխուդ մաշերը մի շտկեր, մատերովդ քիթդ կամ ականջդ մի խառներ:

Քիթդ սրբելէդ ետքը թաշկինակիդ վրայ մի նայիր, ուժով մի խնջեր փողի պէս. քիթդ վեր մի քաշեր:

Կրակի մէջ կամ պատուհանէն վար առանց նայելու, և կամ մարդու առջեւ մի թքներ. երեսիդ, ձեռքիդ կամ հագուստիդ վրայի աղտը թուքովդ մի հաներ:

Եղունդներդ մի՛ կրծեր, մարդու առջեւ եղունգ մի կտրեր, մարդու առջեւ ակուններդ մի խառներ, ոտք ձեռք մի լուար, ու վրադ գլուխդ մի շտկեր:

Ձեռքդ և թաշկինակդ երեսիդ բռնէ և անանկ բռնեդ տա, որ թուքերդ նստողներուն

վրայ կամ քու վրադ չի ցաթկեցունես. ուժով մի բռնեց տար:

Ձեռքերդ աղտոտ մի պահեր և մարդու երեսի կամ զգեստին մի դպցուներ. ինչ որ ձեռքդ ունիս. գրիչ՝ թուղթ, ձեռնոց, ծաղիկ, բերանդ մի տանիր:

Ոտքիդ ամանը հանելով, ոտքդ կրակին երկնցնելով մի տաքցներ. աղտոտ քրտինքոտ թաշկինակդ կրակին դէմ բռնելով մի չորցներ:

Մէկուն բան մը խօսելու ըլլաս՝ շունչդ անոր մի հասցներ. կարելի է որ անախորժ հոտ մը ունենայ, քիչ մը հեռու կենալով խօսէ. դաղանի բան մը ըսելու ըլլաս, շունչդ երեսին մի տար հապա ականջին:

Բերանդ թուղթ կամ ուրիշ բան առնելով մի ծամեր, ու անդադար շրթունքներուդ վրայ բերելով մի կլորեր ու ասդին անդին նետեր:

Ակոսայ կճռցնել, երկաթ երկաթի քսել, ապակի քերել, նստած աթոռը անդադար շարժել. ոտքերը գետինը զարնել. քթի տակէ բան երգել, սուլել. գանձիք բան մը պատմել, ասոնք անբաղաքավարութիւն են:

ՕԳՏԱԿԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Դիմն և Պիւթիաս Պիւթագորեանքը այնպիսի հաւատարիմ բարեկամութիւն հաստատեցին իրենց մէջ, մինչև պատրաստ էին մէկ մէկու համար մեռնելու:

Երբ Դիոնէսիոս բռնակալը կուգէր սպաննել զՊիւթիաս և օրը սահմանեց, դատապարտեալը քանի մ'օր ժամանակ խնդրեց իր դորժերը կարգի դնելու համար, և Դամոնը երաշխաւոր մնաց այն պայմանով, որ եթէ իր բարեկամը ետ չի դառնայ՝ ինքը մեռնիլ յանձն կառնէր:

Ամենքը, ևս առաւել Դիոնէսիոսը՝ կ'սպասէին թէ այս նորանշան և տարակուսական բանը ինչպէս կը վերջանայ: Մօտեցաւ սահմանեալ օրը և չ'վերադարձաւ բարեկամը, ամենքը ըսկսան բամբասել այն երաշխաւորը, որպէս թէ յիմար եղած ըլլար: Բայց՝ երբ որոշեալ օրն իսկոյն վրայ հասաւ միւս բարեկամը, Դիոնէսիոս բռնակալը զարմացած ու հիացած անոնց հաւատարմութեանը վրայ, փոխեց իր վճիռը և խնդրեց որ ան ալ ընդունին իրենց մէջ իբրև երրորդ բարեկամ:

Պէրիկլէս ատենի մէջ հասարակաց գործերու պարապած ատեն, ամպարիշտ և անզգամ մարդ-

մը սկսաւ հայհոյել անոր դէմ: Ասոր համբերեց Պէրիկլէս, և ոչ մէկ պատասխան մը տուաւ, բայց ի վերայ այսր ամենայնի այն մարդը բոլոր օրը հայհոյելէ չդադրեցաւ: Երբ իրիկունը հանդարտ երեսով և զնայքով տուն կուգար Պէրիկլէս, նոյն անամօթը անոր ետեւէն երթալով, ամեն նախատինք բերնէն կը թափէր: Պէրիկլէս տունէն ներս մտնելով, ըստ որում գիշեր էր, հրամայեց իր ծառաներէն մէկուն որ ճրագ վառէ և առաջնորդէ այն մարդուն որ հանգիստ իր տունը երթայ:

Երբ Դիմոսթինէս ճարտարախօսը բանտէն և նոյն իսկ Աթենացւոյ քաղքէն կը վախչէր, տեսաւ որ իր թշնամիներէն մէկ քանին սատարիկ վազելով իր ետեւէն կուգան, վախնալով պահուրտելու տեղ մը կը վնասէր: Բայց անոնք Դիմոսթինէսի անունը ստէպ ստէպ ձայն տալով, վերջապէս հասան անոր և խնդրեցին որ չվախնայ, այլ հետն առնէ այն արծաթը որ տունէն բերեր էին անոր համար իբրեւ ճամբու պաշար և օգնութիւն, այլ և սիրտ կուտային անոր որ շատ չարամի իր վատաբաղդութեանը վրայ: Անոնց պատասխանեց Դիմոսթինէս. ինչպէս համբերեմ այս վատաբաղդութեանը՝ որ կը հեռանամ այն քաղաքէն որոյ մէջ այնպիսի թշնամիք ունիմ, որ եթէ անոնց պէս

բարեկամներ ունենայի, շատ ու շատ երջանիկ կ'ըլլայի:

Մեծն Դիոնէսիոս, որ Սիկիլիոյ բռնաւորն էր, իր բերնովը խոստովանեցաւ թէ այն երջանկութիւններն ինչպէս էր: Երբ անոր մարդահաճ պալատականներէն մէկը, Դամոկլէս անունով, խօսակցութեան մէջ կը պատմէր անոր զօրքերը, հարստութիւնները, թագաւորութեան մեծութիւնը, կերակուրներուն առատութիւնը, արքայական ապարանքի փառաւորութիւնը, և կ'ըսէր թէ՝ և ոչ մէկն այսչափ երջանիկ եղած չունի. այսպէս խօսեցաւ Դիոնէսիոս. ո՞վ Դամոկլէս, ըստ որում իմ այս կեանքս զգրեղ կարի կ'ուրախայնէ, ուրեմն կ'ոգլես անոր համը տեսնել և իմ երջանկութիւնս փորձով իմանալ: Դամոկլէս համաձայնեցաւ. վերջը հրամայեց Դիոնէսիոս, նստեցնել այն մարդը ոսկեղէն աթոռի մը վրայ, ներքեւ շատ դեղեցիկ օթոց ձգած, վրան փառահեղ դործուածներով հիւսած ծածկոց, չորս կողմը զանազան տախտակներ շարած՝ ու զարդարուած էին ոսկի և արծաթի քանդակադործութեամբ: Ապա հրամայեց մէկ չքնաղաձև սեղանի մը մօտ կանգնեցնել ընտիր ընտիր մանկունք, ամենայն արթնութեամբ նայելով անոր հրամանին եւ անոր սպասաւորելով. դրուած էին հոն օձա-

նելիք և թագեր . խունկերու անուշահոտութիւն
կը բուրէր , և պատրաստուած էին հազուա-
գիւտ կերակուրներով լեցուն սեղաններ : Դա-
մակէս բաղդաւոր կարծեր էր իր անձը , բայց
Դիոնէսիոս այս փառահեղ պատրաստութեան
մէջ հրամայեց որ շողշողուն սուր մը՝ մազով մը
կապուած՝ առաստաղէն կախեն այն երջանիկ
մարդուն գլխուն վրայ : Դամակէս նկատելով
այս զարհուրելի սուրը , ոչ այն գեղեցիկ սպա-
սաւորնորուն կը նայէր , ոչ այն բաղմարուեստ
զարդարանքներուն և ոչ ձեռքն երկնցուց սե-
ղանին , այլ մանաւանդ թէ աղաչեց Դիոնէսի-
ոսի որ թոյլ տայ իրեն հեռանալ անկէ . ըստ
որում ալ կամք չունէր երջանիկ ըլլալու : Ահա
ինքը բռնակալը բացայայտ ցոյց տուաւ թէ
երբէք երջանիկ չէ այն մարդը , որուն գլխուն
վրայ վտանգ մը կախուած կայ :

Սկիւռլոս , Սկիւթացուց թագաւորը մեռ-
նելուն մօտ հրամայեց որ բերեն պրակ մը դա-
ւաղաններ և ամէնը ի միասին կապուած տուաւ
իր ութսուն որդւոցը որ խորտակեն զանոնք :
Երբ ամեն մէկ որդին ըսաւ թէ չեմ կրնար այդ
բանն ընել , վերջը ինքը թագաւորը քակեց
ան կապուած պրակը և մէկիկ մէկիկ կոտորե-
տեց զանոնք ասանկ խրատ տալով անոնց , ա-
հա տեսէք , իմ որդիքս , եթէ միասիրտ ըլլաք .

անյաղթելի կը մնաք՝ բայց եթէ բաժնուիք
մէկ մէկէ՝ տկար կ'ըլլաք :

Ամեն օր պէտք է մեր սիրտը հաշիւ տայ
մեզի : Այսպէս կը վարուէր Սեքստիոս Հռոմա-
յեցին . օրը վերջացուցած և գիշերային հան-
գասեան մտած ժամանակը , կը հարցնէր իր
անձին , այսօր քու վրադ ո՞ր պակասաւոր բանն
ուղղեցիր , ո՞ր յանցանքին ընդդիմացար , և ի՞նչ
բանով աւելի կատարեալ եղար : Արդարեւ մէկ
ամենագեղեցիկ սովորութիւն մը , որով մարդս
պէտք է քննութիւն ընել թէ ինչպէս անցու-
ցեր է իր բոլոր օրը :

Չինացի Մանտարին մը դատապարտուած
էր մեռնելու , ըստ որում յանցաւոր էր գըտ-
նուած իր պաշտօնին մէջ : Անոր տասն և հինգ
տարեկան որդին գնաց թագաւորին դուռը ,
որ աղաչէ և թոյլատուութիւն խնդրէ իր ծնողին
տեղը մեռնելու :

Թագաւորը տեսնելով որդւոյն ծնողասիրու-
թիւնը՝ վճիռը փոխեց :

Գերմանիոյ քաղաքներուն մէջ սովորութիւն
է մարդ մը մեռնելուն պէս եկեղեցուց զան-
գակներն զարնել : Անգամ մը կօշկակար մը
դատաստանի մէջ իրաւունքն կորսնցնելով ժա-
մակսէին գնաց և խնդրեց որ զանգակը զարնէ ,

ժողովուրդը կը հարցնէր թէ ով է մեռեր:

— Դատարանէն արդարութիւնը մեռեր է; պատասխանեց կօշկակարը:

Բլինիուս իր բնախօսութեանը մէջ Հնդկաստանի սահմաններուն մօտ բնակող ազգ մը կը յիշէ որոնք այնքան երկայն և լայն ականջներ ունին որ ինքզինքնին, անոնցմով կրնան ծածկել: Ուրիշ գրքի մը մէջ ալ կը կարդանք թէ Արնէթօ կղզիին վրայ տեսակ մը մարդիկ կը գտնուին որոնց ականջներն այնքան ընդարձակ են որ եթէ պառկին մէկ ականջը իբր անկողին իսկ միւսը իբր վերմակ կը գործածեն:

Կրակագոյն քիթով Հնդիկ մը օր մը կը քնանար, իր խափշիկ ծառան քովը կ'սպասէր. ճանճ մը գալով մարդուն երեսին վրայ կանգնեցաւ և շուտով նորէն թռչիլ սկսաւ: Օ՛իս, ըսաւ խափշիկը ասի տեսներով, որքան լու եղաւ որ ստքերդ այրեցան:

Տէր իմ, ըսաւ պարոն մը բժիշկին, խնդրեմ ինձ քնանալու համար դեղ մը տուէք, ամիս մ'է որ աչքերս գոցած չեմ: Բժիշկը Արիոն տուաւ անքուն պարոնին և խրիկեց: Հետեւեալ առաւօտ մարդը դարձեալ բժիշկին գալով, Տօթթօր ըսաւ, Արիոնը ինձ օգուտ մը չըրաւ: Բժիշկը Բլօրօֆորմ տուաւ, սակայն այս ալ ի

զուր, եթեր տուաւ, բայց այս ալ օգուտ չըրաւ և պարոնը ամեն օր գալով բժիշկին քնաբեր դեղ կուղէր:

— Բայց, սիրելիս, ըսաւ բժիշկը յուսահատական ձայնով մը, քնաբեր դեղերն ամենն ալ արդէն ձեզի տուի, ինչ է պատճառը որ չէք կրնար քնանալ:

— Ա՛, կը ներէք, պարոն Թօթթօր, ըսաւ անքուն մարդը, տունս ի՞նչ մը կ'ունենայ...:

ՋՈՐԱԻՈՐ ԵՒ ՀԱՆՃԱՐԵՆ ԽՍՄԲԵՐ

Աղէքսանդր Մակեդոնացին տեսներով որ իրեն համանուն զինուոր մը գետը նետուելու և միւս կողմը անցնելու կը վախնար, կը բռնէ անոր ձեռքէն, կամ անունդ փոխէ կ'ըսէ եւ կամ սիրտդ: Մէկէն զինուորը սիրտ կ'առնէ և գետը կը նետուի:

Աղէքսանդրի հարցուցին թէ, քու գանձերդ ո՞ր կը պահես, պատասխանեց, իմ բարեկամներուս քով:

Թէոփրաստոս հացկերոյթի մը մէջ մարդու մը բոլորովին լուռ կենալը տեսներով՝ ըսաւ,

եթէ յիմար ես՝ ըրածդ իմաստնաբար է, եթէ իմաստուն ես՝ ըրածդ յիմարաբար է:

Թէմոկրիտէսին հարցուց շատախօս մարդ մը, վաղը ո՞ր տեղ կընամ գրեզ տեսնել, պատասխանեց Թէմոկրիտէս՝ այն տեղ, ուր տեղ ես գրեզ տեսնելու չեմ:

Յունաց մէջ Ատտիկեցի ըլլալը պարծանք սեպուած ըլլալով, անմիտ Ատտիկեցի մը Անաքարսիս երեսը կը գարնէր անոր Սկիւթացի ըլլալը: պատասխանեց Անաքարսիս, ինծի նախատինք է իմ հայրենիքս, բայց դուն նախատինք ես քու հայրենեացդ:

Մարդ մը իր բարեկամին հանդիպելով ըսաւ, երազիս մէջ տեսայ և խօսեցայ քեզի հետ, պատասխանեց միւսը, ներողութիւն կը խնդրեմ որ քեզի ականջ չեմ դրած:

Դիողինէսի հարցուցին թէ՛ ինչու համար մարդիկ մուրացկաններուն աւելի առատաձեռն կըլլան քան փիլիսոփայներուն, պատասխանեց. վասն զի անոնք աղէկ գիտեն որ աւելի շուտով կարող են կաղանակ և կուրնալ՝ քան թէ փիլիսոփայ ըլլալ:

Դիմոնաքս տեսնելով որ մարդ մը իր զգես-

տովը կը պարծենայ, բռնեց զգեստէն ու ըսաւ, ինչո՞ւ այս հանդերձով կը պարծենաս. զոր քեզմէ աւաջ ոչխարը կը հագնէր, և դարձեալ ոչխար էր:

Անաքարսիս փիլիսոփայն ներկայ գտնուելով Աթենացւոյ մէկ ժողովին մէջ, ըսաւ, կը զարմանամ որ Յունաց մէջ խօսողները իմաստուններն են բայց դատողները յիմարներն են:

Մարդու մը հարցուցին թէ Աստուած ո՞ւր տեղ է. պատասխանեց, բէք նախ թէ ո՞ւր տեղ չէ:

Դիողինէսի հարցուց մէկը, թէ ի՞նչ բան աւելի շուտով կը մոռցուի. պատասխան ընդունեց բարերարութիւնը:

Դովասանութեան արժանի է Արկիւտասի այն խօսքը որ զիւղացիի մը վրայ բարկանալով ըսաւ, ի՞նչպէս պիտի պատժէի գրեզ եթէ բարկացած չըլլայի:

ԿԵՐԱԿՈՒՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՁՊԷՍ ՇԱՐԺԵԼՈՒ Է

Ամէն հրաւիրուած տեղը գացող մարդուն պատառաբոյժ կ'ըսեն, բնաւ մէկուն հրաւերն ալ չընդունողին՝ տմարդի կ'ըսեն:

Մէկուն հրաւերը որ ընդունիս, պէտք է որ գացած տանդ սովորութեանը յարմարիս, որպէս թէ քու տունդ է:

Տանը գործերուն խառնըվելու չէ, թէ որ քու արժանաւորութեանդ համեմատ քեզ չի պատուեն՝ նեղութիւն մի ցուցներ. աւելի սըրտին նայէ քան թէ գործին:

Սեղանին գլխաւոր եւ երեւելի տեղը մի՛ նըստիր. համբերէ որ միւս սեղանակիցները տեսնես ինչպէս որ պիտի նստին՝ դուն ալ անանկ նստիս:

Ուրիշներէն առաջ անձեռոյդ բանալու մի արտորար այլ սպասէ որ տանը տէրը կամ հոն գտնուող յարգի մէկը բանայ, անկէ ետքը դուն բաց: Կերակուրէն առաջ Հայր մերդ ըսէ, երեսու ատենդ ալ աղօթքդ ըրէ եւ փառք տուր Աստուծոյ եւ անանկ սեղանէն ել, բայց աղօթքդ ցած ձայնով կատարէ:

Սեղանէն ոչ շատ հեռու եւ ոչ անոր շատ մօտ նստէ. շիտակ կեցիւր աթոռիդ վրայ, արմուկդ սեղանին վրայ մի դնէր, միայն դաստակդ կրնաս դնել:

Կերակուրի բաժինը քեզի տրուած ատեն չափազանց մի խեղըվինար՝ աջ ու ձախ կողմիդ գտնաւով, հրամէ մի ըսեր, եւ սպասաւորը իր գործէն մի խափաներ:

Քեզի տրուած կերակուրը առ երեսդ չի թրթվեցնելով, առջեւիդ սկաւառակին մէջ

դիր, առածիդ պէս ուտելու մի սկսիր, ուրիշներուն ըրածին հետեւէ:

Տան տէրը քեզի կերակուր կամ խմելիք մը որ տայ, չըլլայ որ ձեռքէն առնես եւ ուրիշին տաս, անով ըսել ուղած կ'ըլլաս թէ՝ ինծի տալ չի վայլեր. պատուելու մարդդ ես քեզմէ աղէկ կը ճանչեմ:

Ախորժած կամ չախորժած կերակուրդ մի իմայնէր, չախորժած կերակուրէդ քեզի տալու որ ըլլան, դիր սկաւառակիդ մէջ թող մնայ, մինչեւ որ ուրիշ կերակուր մը բերեն:

Կերակուրը աղէկ եփեր է կամ չէ եփեր, համով է կամ անհամ, պակասութիւն մ'ունի կամ չունի. քեզի չի վայելեր որ ըսես, թէ որ քեզի հարցնեն նայէ որ կրցածիդ չափ դովես:

Թանը շատ տաք որ ըլլայ, բերանովդ մի փշեր, դրդալովդ կամաց կամաց խառնէ որ պաղի. ուրիշ կերակուրներն ալ պաղեցնելու համար մի փչէր:

Չըլլայ որ սկաւառակը բերանդ առնես եւ մէջի մնի ջուրը խմես, հապա դրդալովդ խմէ, դրդալիդ չեկած բանը սկաւառակիդ մէջը ձգէ, սկաւառակդ ալ հացով մի սրբեր:

Քու առջեւէդ կերակուր վերցնելով՝ հասարակաց սկաւառակին մէջ մի դնէր. մէկ բանի մը համը նայելէն ետքը ուրիշի մը տալ չի վայելեր:

Ոչ շատ արտորնօք կեր, և ոչ շատ ծանր, մէկ պատառդ վար չի գացած մէկալը բերանդ մի դներ, նայէ որ շրթունքներուդ ծամելիքներուդ ձայնը չենէ, բերանդ գոց պահէ, և բերանդ լեցուն եղած ատենը մի խօսիր:

Քեզի տրուած կերակուրը մի՛ հոտուրտար, ատ կտորը չեմ ուզեր, նա կտորը կուզեմ մի՛ ըսեր, երբ որ կտորը ուզելդ հարցնեն և ստիպեն, ուզած կտորդ ան ատեն առ:

Մատուըներդ, պատառաքաղդ, դանակդ լիզելը մարդու սիրտ գանեցնելիք բաներ են. սկաւառակիդ մէջ եղած բանին վրայ մաղկամ ուրիշ գանելիք բան որ տեսնես, զդուշութեամբ առ և սկաւառակիդ մէկ քովը դիր:

Բերանդ բան մը առնես և նայիս որ քեզի գէշ կընէ ու պիտի չի կրնաս ուտել, անձեռոցովդ բերանդ ծածկէ և հանէ ու սկաւառակիդ մէջ դիր, թէ որ չես կրնար, պատճառով մը դուրս ել և այնպէս բերնէդ հանէ որ մարդ չի տեսնէ:

Սեղանի վրայ սպասաւորութիւն ըրած ատենդ թէ որ մէկը քեզմէ հաց ուղէ, ձեռքով մի՛ տար, սկաւառակի մէջ դիր անանկ տուր. դանակ, պատառաքաղ, դրդալ մէկուն որ տաս կոթը անոր դարձուր:

Մէկը թէ որ քեզմէ ջուր ուղէ, բաժակը սկաւառակի մէջ դիր, անանկ տուր, ուղղ

մարդը բաժակը ձեռքը առնելուն պէս, սկաւառակը մէկդի առ:

Թանը կերած ատենդ խմելիք մի ուզեր, բերանդ լեցուն եղած ատեն բան մի խմեր, խմելիք բանիդ վրայ շատ բարակ բարակ մի նայիր:

Խմելիք առաջ անձեռոցովդ շրթունքդ ու մատներդ սրբէ, մի՛ մէյմը խմեր, մէյմը կայնիր, բաժակը ձեռքդ մի խօսիր, խմելիք ետքը մի հեվար ու նորէն բերանդ սրբէ:

Խմած ատենդ աչքդ ասդիս անդին մի ըներ, կոկորդէդ անճոռնի ձայներ մի հաներ, այնչափ արտորնօք մի՛ խմեր որ շրթունքիդ երկու քովէն խմածդ կուրծքիդ վրայ վաղէ:

Կշտանալուդ պէս սեղանէն մի՛ ելներ, սպասէ որ ամենուն հետ ելնես, սեղանին վրայէն պտուղ կամ շաքարեղէն ձեռքդ առած չենես:



ԸՆՏԻՐ ԱՌԱՄՆԵՐ

Խնայողութեամբ շատ քիչերն կ'աղքատանան, չռայլութեամբ ամենը:

Թշնամոյդ բարիք ըրէ որ հետդ բարեկամանան, բարեկամացդ բարիք ըրէ որ բարեկամդ մնան:

Ոչ շատ արտորնօք կեր, և ոչ շատ ծանր, մէկ պատառու վար չի գացած մէկալը բերանդ մի դներ, նայէ որ շրթունքներուդ ծամելիքներուդ ձայնը չեղնէ, բերանդ դոց պահէ, և բերանդ լեցուն եղած ատենը մի խօսիր:

Քեզի տրուած կերակուրը մի՛ հոտուըտար, առ կտորը չեմ ուզեր, նա կտորը կուզեմ մի ըսեր, երբ որ կտորը ուզելիք հարցնեն և ստիպեն, ուղած կտորդ ան ատեն առ:

Մատուըներդ, պատառաքաղդ, դանակդ լիզելը մարդու սիրտ գանեցնելիք բաներ են. սկաւառակիդ մէջ եղած բանին վրայ մաղկամ ուրիշ գանելիք բան որ տեսնես, զգուշութեամբ առ և սկաւառակիդ մէկ քովը դիր:

Բերանդ բան մը առնես և նայիս որ քեզի գէշ կրնէ ու պիտի չի կրնաս ուտել, անձեռնողութեանդ ծածկէ և հանէ ու սկաւառակիդ մէջ դիր, թէ որ չես կրնար, պատճառով մը դուրս ել և այնպէս բերնէդ հանէ որ մարդ չի տեսնէ:

Սեղանի վրայ սպասաւորութիւն ըրած ատենդ թէ որ մէկը քեզմէ հաց ուղէ, ձեռքով մի՛ տար, սկաւառակի մէջ դիր անանկ տուր. դանակ, պատառաքաղ, դրդալ մէկուն որ տաս կոթը անոր դարձուր:

Մէկը թէ որ քեզմէ ջուր ուղէ, բաժակը սկաւառակի մէջ դիր, անանկ տուր, ուղող

մարդը բաժակը ձեռքը առնելուն պէս, սկաւառակը մէկդի առ:

Թանը կերած ատենդ խմելիք մի ուղեր, բերանդ լեցուն եղած ատեն բան մի խմեր, խմելիք բանիդ վրայ շատ բարակ բարակ մի նայիր:

Խմելէդ առաջ անձեռնողութեանդ շրթունքդ ու մատներդ սրբէ, մի՛ մէյմը խմեր, մէյմը կայնիր, բաժակը ձեռքդ մի խօսիր, խմելէդ ետքը մի հեվար ու նորէն բերանդ սրբէ:

Խմած ատենդ աչքդ ասդիս անդին մի ըներ, կոկորդէդ անճոռնի ձայներ մի հաներ, այնչափ արտորնօք մի՛ խմեր որ շրթունքիդ երկու քովէն խմածդ կուրծքիդ վրայ վաղէ:

Կշտանալուդ պէս սեղանէն մի՛ ելնիր, սպասէ որ ամենուն հետ ելնես, սեղանին վրայէն պտուղ կամ շաքարեղէն ձեռքդ առած չեղնես:

ԸՆՏԻՐ ԱՌԱՄՆԵՐ

Խնայողութեամբ շատ քիչերն կ'աղքատանան, չռայլութեամբ ամենը:

Թշնամույդ բարիք ըրէ որ հետդ բարեկամանան, բարեկամացդ բարիք ըրէ որ բարեկամդ մնան:

Ծոյլը մուրացկանին եղբայրն է :

Ընտանեաց մէջ կռիւը կը փախցնէ էրիկը :

Երկար ժամեր անկողինը մնացողը ծոյլ և բթամիտ կըլլայ :

Զեղխութիւնը բժիշկը այցելութեան կը հրաւիրէ :

Հիւանդութիւնք՝ անհոգութեանց հասցուցած պտուղներն են :

Օղիի շիշերը դեղերու շիշեր տուն կը բերեն :

Բժիշկին տալիք դրամը լաւագոյն է խոհարարին տալ :

Դպրոցն ատողը յիմար կը մնայ :

Այսօր ճոխ կերակուր պատրաստել կուտանք , վաղը որդերուն կերակուր կըլլանք :

Փոքրիկ գործեր սերման նման կամաց կամաց կ'աճին կը մեծնան :

Խոր դետերը վեհ լուծեամբ կը հոսեն , փոքրիկ վտակներն յարձակող կըլլան :

Բարկացած ատենդ մէկէն մինչև տասն համբէ , զայրացած ատենդ մինչև հարիւր :

Պէտք չեղած բանը որքան աժան ալ ըլլայ՝ մի՛ գներ :

Այն գործը որ դու կրնաս ընել՝ այլոց վերայ մի բեռնաւորեր :

Այսօրուան կատարուելիքը վաղուան մի թողուր :

Բարի սկզբնաւորութիւնը բարի վախճանի մը կը հասցնէ :

Շատ անգամ երբ կը կարծենք թէ իյնալու վրայ ենք՝ արդէն յաջողութիւնը մեր դրանը մօտեցած է և մենք չենք տեսներ զանի :

Ամեն տեսակ վերքի համար սպեղանի չը գտնուիր ,

Դիտողութիւնը ամենալաւ ուսուցիչն է . ամեն դէպքերէ ջանա դաս մ'առնել :

Ամենայն ինչ փորձէ և բարին հաստատ պահէ :

Դժբախդութեան դիմանալ չ'կրցողն թըշուառ է :

Շատ թշնամիներ ունեցողը աղէկութիւն մը ունենալու է :

Անհանգիստ խիղճ մը ամենամեծ նեղիչն է :

Ով որ փարաններն ըստ արժանւոյն կը գոր-

ծածէ լերաներն ինքնիրեննուն կը հաւաքուին :

Փայտի կտորուանք կրակն կը վառեն իսկ հաստ հաստ կոճղեր զանի կը մարեն :

Կրակի հետ խաղացողն կայրի :

Բազում խոհարարք երբ մէկտեղ գործեն . ապուրը կաւրեն և անհամ կընեն :

Կամայ շուայլութեան յաջորդն է ակամայ կարօտութիւն :

Քու ներկայութեանդ առջին ուրիշը քննադատողը անտարակոյս զքեզ այլոց առջին պիտի դատապարտէ :

Թող քու գերազանցութիւններդ ուրիշներն տեսնեն և պատմեն , դու կոյր և համբ լերանոց նկատմամբ : Պատմութեան ամենամեծ անձինքը ամենէն խոնարհ էին :

Եթէ չես ուղեր այլոց ծաղուն և կատակին առարկայ ըլլալ միշտ բնական ձայնովդ խօսէ . այսինքն ինչ որ ես ճիշդ այնպէս ալ ցոյց տուր :

Մեր օրական հացը տուր . աղօթքին պատասխանն է . քու օրական պարտքերդ կատարէ :

Ունայն խօսքերն մութ տեղը արձակեալ նետերու կը նմանին , չես գիտեր թէ որու սրտին պիտի թափանցեն :

Մի հարցներ թէ այս ինչ ճշմարտութիւնը ո՞վ է ըսեր . այլ ականջ դիր ըսուածին և գործադրէ :

Կրից դէմ մաքառելով մարդս սրտի անդորութիւն կ'ստանայ . ոչ թէ անոնց հետեւելով :

Մարմնոյդ գեղեցկութեանը և շքեղութեանը վրայ մի պարծենար . թեթեւ հիւանդութիւն մը զանի կրնայ ամենատղեղ , ատելի և զգուելի ընել :

Սրտիդ գաղտնիքները ամենուն մի յայտներ :

Հարուստներուն շողորորթութիւն մի ըներ :

Կանանց սեռին հետ այնքան մտերմական յարաբերութիւն ունենալը փաստակար է :

Շատ անգամ անծանօթ մէկը հեռուէն լոյս ըլլալ կը կարծեմք , բայց մօտը եկած ատենը բուն խաւար է նա :

Աւելի դիւրին և ապահով է հնազանդիւքան իշխել :

ՄԱՐԴԱՅ, ՎԱՐԺԱՊԵՏԻ, ԿԱՐԳԱՌՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԵՄԵՐՈՒ
ԻՆՉ ՅԱՐԳԱՆՔ ՏԱԼՈՒԷ

Նախ զԱստուած սիրէ , պաշտէ , և հոգւով ու մարմնով անոր ծառայէ՝ որ քեզ ստեղծեր է և կը խնամէ :

Աստուծմէ ետքը սիրէ ու յարգէ քու ծնողքդ, հայրդ և մայրդ, որոնք քեզ ծներ են և կը սընուցանեն և բարի կըթուփուենով կը պահեն ու կը մեծցնեն: Հայրդ ու մայրդ քեզի ինչ հրաման որ ընեն, շուտ մը կատարէ. չըլլայ որ անոնց սիրտը վերաւորես անոնց կարօտութեանը ու ծերութեանը դուն պիտի օգնես: Հօրդ ու մօրդ խրատին ահանջ դիր, անոնց վրայ պակասութիւն մի գտներ, միշտ հնազանդ ու պարկեշտ ընթացք մը ունեցիր, և ջանա որ անոնց օրհնութիւնը վայելես միշտ: Ծնողներէդ ետքը սիրէ ու յարգէ քու վարժապետդ որ քու բարի ըլլալուդ պատճառ է, և կամ կըրթութեանդ ու զարգացմանդ հոգ ունի: Վարժապետիդ երախտիքը մի մոռնար, անոր աշխատութիւնը քիչ բանով չես կրնար փոխարինել, քեզի ինչ պատուեր և դաս որ տայ՝ ուշադրութեամբ սորվէ, և քու աղէկ օրդ զանի մի մոռնար:

Կարգաւորները պատուէ, անոնք Աստուծոյ փրկարար օրէնքները ու պատուէրները, Քրիստոսի կենարար վարդապետութիւնները և սուրբ առաքելոց և եկեղեցւոյ քարոզութիւնները քեզի կը սովորեցնեն:

Տարիքով քեզմէ մեծը, ծերերը և երեւելի անձերը պէտք է որ յարգես. անոնց քով պարկեշտութեամբ և ակնածութեամբ շարժիս. թէ

որ անոնցմէ մէկը եղած տեղդ դայ, ոտքի վրայ ենես. և մինչև հրաման չի տայ՝ չի նստիս: Զըլլայ որ ծերերը ծաղրես, անոնց պակասութիւններուն վրայ խնդաս. միտքդ բեր որ դուն ալ օր մը անոնց պէս պիտի ըլլաս: Ծերերը աշխարհիս շատ բանին փորձառու ըլլալով, անոնց խրատին մտիկ ըրէ, և կատարէ: Քու վարժ երախտիք ունեցողները ով կ'ըլլայ թող ըլլայ, հայր, մայր, վարժապետ, կարգաւոր, ծեր, պատուաւոր անձ, պարտական ես սիրելու և յարգելու. քեզի աղէկութիւն ընողին երախտիքը ամենեւին չի մոռնաս:



ԵՂԲՐԻ, ԲԱՐԵԿԱՍԻ, ՄԵՐԱՍԻՈՐԻ ԵՒ ԴԱՍԵՆԿԵՐԻ ՇԵՏ
ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԵԼՈՒ Է.

Եղբայրդ ու քոյրդ սիրէ, ու օգնէ անոնց ինչու որ մէկ հօր և մէկ մօր զաւակ էք. Աստուածային և բնական օրէնքը ասանկ կը պահանջէ: Եղբօրդ պակասութեանց ներէ. յիսկալութիւն նախանձ ու ատելութիւն մի ունենար անոր հետ, հոգ տար որ անկէ հոգւով ու մարմնով չի բաժնուիս, եւ ՚ի միասին բնակիր. — Մինչեւ մէկը չի փորձես, քեզի բարեկամ չ'ընտրես. բարեկամ ըլլալիք անձը պէտք է որ ըլլայ խոհմ և փորձառու, հեզ, քաղցր, բարեսիրտ, առաքինի, հաւատարիմ և անկեղծ. բա-

ընկամիդ հետ ուրիշ բան չես, բայց եթէ երկու մարմնոյ մէջ մէկ հոգի. ուրախութեանը ուրախակից և ցաւոցը ցաւակից պիտի ըլլաս. ուստի ան որ քեզի բարեկամ ընտրած ես՝ պէտք է որ զանի սիրես բոլոր սրտովդ:

Մեր մերձաւորը պէտք է որ սիրենք, մարդ մը իր նմաններուն ունեցած պարտքը կատարելու է, բարեկամ ալ ըլլան թշնամի ալ:

Ուրիշին պակասութեանը ներէ, ինչու որ շատ ատեն ալ դուն ուրիշին ներման կարօտ կըլլաս: Գինովցած մարդուն վրայ մի խնդար՝ այլ ցաւէ. բնական պակասութիւն ունեցող անձերուն վրայ մի՛ ծիծաղիր, կաղ, սապատող, կոյր, միականի մարդիկը մի ծաղրեր:

Վարժարանի մէջ դասընկերիդ և ուրիշ ընկերներուդ հետ անուշութեամբ և քաղաքավարութեամբ վարուէ. միշտ քաղցրաբարոյ եղիր, և կռիւ է փախիր: Վարժարանի մէջ կամ անկէ դուրս քու ընկերիդ նեղութիւն մի տար, անհանդիստ մի՛ ընել զանոնք. թէ որ մէկուն զարնես կամ պզտիկ չարութիւն մը ընես՝ անըզդամ ըլլալդ կը յայտնես:

Ընկերիդ՝ ձեռքէդ եկած բարերարութիւնը ըրէ, քեզի բան մը հարցնեն կամ թէ որ սխալ մը ունին. պատասխան տուր կամ չտէ:

Ուրիշին համար ներողամիտ եղիր, բայց ոչ

քեզի համար. չըլլայ որ ընկերիդ աչքին չիւղը տեսած ատենդ քու աչքիդ դերանը մոռնաս:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Հոգ տար որ խոնարհ ըլլաս, չըլլայ որ քու գիտութեանդ, խոհեմութեանդ, յաջողութեանդ և այլ ունեցածիդ վրայ պարծենաս. խմաստուն և փորձառու մարդոց խորհուրդ հարցուր. հպարտ մարդու պէս ինքզինքդ խելացի մի կարծեր:

Աշխարհիս փորձութիւններուն համբերէ, քեզի վիշտ կամ ցաւ տուողին փոխարէն ներող եղիր, նեղսրտութիւնը շատ անգամ գէշ վտանգներու կը տանի մարդը, համբերութեամբ շատ ծանր ու դժուարին դործեր կը կատարուին:

Հնազանդ եղիր ծնողացդ, վարժապետիդ, մեծիդ և անոնց պատուէրը ու խրատը պահէ: Հնազանդ եղիր Սատուածային ու մարդկային օրինաց՝ յարգէ ու մեծարէ զանոնք:

Խաղաղութիւնը սիրէ, ամենուն հետ սիրով վարուէ, պարապ տեղը վեճ ու կռիւ հանելէ զգոյշ եղիր, չըլլայ որ բանսարկութիւն ընես, խօսք խառնես, մէկուն խօսքը ուրիշին երթաս իմացնես:

Պարկեշտ եղիր. ամէն վարմունքդ չափաւորութեամբ և վայելչութեամբ կատարէ. ամեն մոլութենէ հեռի կեցիր, հոգ տար որ բարի անունդ չի կորսնցնես:

Քու խօսքդ ճշմարիտ ըլլայ, ճշմարտախօս մարդուն ըսածին ամէն մարդ կը հաւատայ և չի կասկածիր, սիրտդ ինչ որ է, բերանդ ալ նոյնը թող խօսի:

Քու ընկերոջդ աղէկութիւնը տեսնելով հոգ տար որ դուն ալ անոր պէս ըլլաս, ուրիշին ունեցածը քեզի օրինակ բռնէ և բարի նախանձաւորութիւնով այն բանը ունենալու դուն ալ ջանաս. Ուրիշին ունեցածին վրայ մի' նախանձիր ընկերիդ աղէկութիւնը չի քաշելով մը, վար մի' զարներ, մի' բամբասեր. նախանձոտ մարդը ինքզինքը կը տանջէ և անհանգիստ կ'ընէ:

Ազգդ սիրէ, ընկերիդ աղէկութիւն ընել քու պարտքդ է, ընկերութեան մէջ քեզի ամենէն մօտը քու Ազգդ է, զայն միշտ սիրելու պարտական ես:





U. 2.

№ 4437